ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի նախագծի կնքման նպատակահարմարության վերաբերյալ

Սիրիական կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» նոր համաձայնագրի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) արդիական է և համապատասխանում է ավիացիայի ոլորտում գործող միջազգային փաստաթղթերի պահանջներին:

Նախագիծը ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) և կատարվել են որոշ խմբագրումներ և լրամշակումներ (կից ներկայացնում ենք հայերեն և անգլերեն տարբերակները):

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի կնքումը կնպաստի երկու երկրների միջև կանոնավոր օդային հաղորդակցությունների ոլորտում հարաբերությունների պատշաճ և լիարժեք իրավական կարգավորմանը՝ Գլխավոր վարչությունը համաձայնագրի կնքումը համարում է նպատակահարմար:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՍԵՐԳԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ